Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Լեռնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Աշխարհագրություն>> առարկայի 6 (դասաժամ), <<Անգլերեն>> առարկայի 7 (դասաժամ), <<Քիմիա>> առարկայի 6 (դասաժամ), <<ԹԳՀԳ>> առարկայի 7 (դասաժամ), <<Ֆիզկուլտուրա>> առարկայի 15 (դասաժամ), <<Հասարակագիտություն>> առարկայի 7 (դասաժամ), <<ՆԶՊ>> առարկայի 4 (դասաժամ), թափուր տեղ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (ձև1)
- 1 լուսանկար՝ 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) ,
- Ինքնակենսագրություն (ձև 5)
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հաստատող փաստաթուղթ:
-

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 18 -ը ներառյալ , ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 23-ին՝ ժամը 13:00-ին, Շիրակի մարզի «Լեռնուտի միջնակարգ դպրոցում». հասցեն՝ Շիրակի մարզ գ.Լեռնուտ:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 188481 հեռախոսահամարով: